ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ
ԵՊՀ արաբագիտության ամբիոն
Պատմական գիտությունների թեկնածու
ՀՏԴ 93/94

ԳԼԽԱՀԱՐԿԸ ԵՎ ՀՈՂԱՀԱՐԿԸ ԱՐԱԲՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆՎԱՃՎԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՏՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ

Բանալի բառեր և արտահայտություններ. հարկատեսակ, գլխահարկ, հողահարկ, պայմանագիր, նվաճված երկիր, հովանավորյալ դաս, պետական և մասնավոր հողատիրույթ, գույքի անձեռնմխելիություն, ժառանգական իրավունք, հողերի չափագրում

Ключевые слова и выражения: тип налога, подушный налог, земельный налог, договор, побежденная страна, покровительствуемый класс, государственные и частные земельные участки, неприкосновенность имущества, наследное право, измерение земли.

Key words and expressions: the type of tax, poll tax, land tax, contract, defeated country, patronized class, public and private lands, the inviolability of property, the right to hereditary, land measurement.

Արաբական նվաճումների հետևանքով 7-րդ դարի 2-րդ կեսին Արաբական խալիֆայության տիրապետության տակ անցան հսկայական տարածքներ Ասիայում, Մերձավոր Արևելքում, Աֆրիկայում:Այդ երկրները գտնվում էին զարգացման անհամեմատ բարձր աստիճանի վրա,և արաբները իրենց հարկային քաղաքականության մեջ հմտորեն օգտագործեցին այդ երկրներում կիրառվող Բյուզանդական կայսրության և Սասանյան Պարսկաստանի վարչական համակարգը,որի լուսաբանման համար կարևոր աղբյուր է 10-րդ դարի մուսուլման պատմագիր Տաբարիի ժամանակագրությունը:Պատմագիրը հիշատակում է, որ 6-րդ դարում Պարսկաստանում անց է կացվել հողերի չափագրում,որն իր ավարտին է հասցվել Խոսրով Անուշիրվանի(531-538) օրոք, որը կարգադրել էր հաշվել նաև մարդկանց թվաքանակը[1]:

[1] Noldeke Th., Geshichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden, aus der arabishen Chronick des Tabari, Leiden, 1879, s.241-247.

Օմար իբն ալ-Խատտաբ խալիֆան (634-644) նվաճված երկրների հողային տարածքներում կիրառեց հողաչափության այս փորձը բնակչության կողմից գանձվելիք հարկի չափը որոշելու համար: Այս մասին վկայում է 9-րդ դարի մուսուլման պատմագիր Բալազուրին, որ Օմարը Օսման իբն Հունայֆին ուղարկեց չափելու Իրաքի հողերը, որից հետո սահմանվեցին հարկերը, հետո նա կնիք դրեց հինգ հարյուր հազար մարդկանց վզերի վրա գլխահարկ վճարելու համար[2]: Նվաճված երկրների այլակրոն բնակչությունը կազմում էր հովանավորյալ դասը (ահլ ալ-զիմմա)[3] պարտավորվելով վճարել գլխահարկ (ջիզյա) և հողահարկ(խարաջ): Խարաջ տերմինը ունի հունական ծագում,այն Մերձավոր Արևելքի երկրներում ուներ մաքս, տուրք նշանակությունը[4]: Ըստ մուսուլմանական իրավագիտության դրույթների, խարաջ էր անվանվում այն հարկը, որը գանձվում էր հողից,այն կարող էր լինել երկու տեսակ.համամասնական խարաջ,որը ենթադրում էր բերքի որոշակի մասի գանձում, սկսած բերքի հինգ բաժնից մինչև կեսը: Խարաջի երկրորդ տեսակը ենթադրում էր հարկը, որը այլակրոնը վճարում էր պարտավորվածությամբ, հողը մշակելու համար[5]: Խարաջի այս վերջին տեսակը հաստատված էր Օմար խալիֆայի օրոք: Խարաջի՝ որպես այլակրոնների վրա դրված հարկի պայմանները առաջին անգամ գործադրվեցին Մուհամմադի կողմից Արաբական թերակղզու Խայբար օազիսի հրեաների վրա, որոնք զրկվելով իրենց ունեցվածքից, տարհանվեցին իրենց բնակավայրից՝պահպանելով հողը մշակելու իրավունքը, պարտավորվելով հարկ վճարել մուսուլմանական համայնքին: Այսպիսի հարկ գոյություն է ունեցել նաև Բյուզանդական կայսրությունում: Արաբական նվաճումներից հետո արաբները վերցրին,փոփոխելով և հարմարեցնելով ժամանակի պահանջներին և դրանով այն ամրագրեցին որպես իրենց անձեռնմխելի իրավունքը նվաճված երկրների բնակչության վրա:

Սասանյան Պարսկաստանում հողահարկի հետ միասին վճարվում էր նաև գլխահարկ,այն վճարում էին 20-50 տարեկան տղամարդիկ, ըստ իրենց կարողության չափի, չորս, վեց,ութ կամ տասներկու դիրհեմ չափով: Հարուստ մարդիկ, հոգևորականները, զորքը, պետական աշխատողները

[2] Al-Balazuri, Kitab al-Futuhi al-Buldan,Bayrut, 1983, p.265.

[3] Ислам. Энциклопедический словарь, Москва, 1991, с.27.

[4] Kharadj-Cahen Cl., EOI, IV,Brill, 1978, p. 1029.

[5] Hammer J. Uber die Landervervaltung unter den Chalifate, Berlin,1835, s.119.

ազատված էին հարկերից[6]: Գլխահարկը կիրառվեց նաև արաբների կողմից, նրա սահմանումը առկա է Ղուրանում. մուսուլմանները պարտավորվում էին պատերազմել նրանց դեմ,ովքեր չեն հավատում Ալլահին ու վերջին օրվան,չեն արգելում այն, ինչ արգելել է Ալլահը ու նրա առաքյալը և չեն դավանում ճշմարտության կրոնը,մինչև որ իրենց ձեռքով չտան գլխահարկը և չնվաստացվեն[7]: Ըստ մուսուլման իրավագետների, ջիզյա բառը նշանակում է փոխարինում, հատուցում.այդպես էր կոչվում հարկը, որը վճարում էին այլակրոնները,որովհետև այն փոխարինել էր մահվանը, որին ենթակա էին նրանք[8]: Գլխահարկը երկու տեսակ էր.դրված այլակրոն բնակչության վրա խաղաղության պայմանագրով,որի պայմանները ենթակա չէին փոփոխության անգամ պայմանագրի խախտումից հետո և հարկ՝ դրված այլակրոնների վրա զենքի ուժով,որի չափերը սահմանվել էին Օմար խալիֆայի կողմից(հարուստ խավից՝ 48 դիրհեմ, միջին խավից՝ 24 և աղքատ խավից՝ 12 դիրհեմ): Ըստ միջնադարյան մուսուլման իրավագետ Իբն ալ-Մալիքի, գլխահարկը հավասար էր չորս դինարի կամ 40 դիրհեմի, և աղքատները պետք է վճարեին ինչքան կարող էին: Ալ-Շաֆեին գտնում է,որ գլխահարկը պետք է լիներ մեկ դինար աղքատի և հարուստի համար[9]: Այս հարկը առաջին անգամ կիրառվել է Մուհամմադ մարգարեի օրոք (610-630) Եմենի և Բահրեյնի բնակչության նկատմամբ,որոնք վճարում էին մեկ դինար.այն երկրներում,որտեղ դրամի ճանաչված չափը արծաթն էր, նրան համարժեք էր տասներկու դիրհեմը:Սակայն գլխահարկի չափը կայուն չէր,այն կարող էր վճարվել նաև բնամթերքով, հագուստով, ինչն առկա է Մակնայի, Եմենի Նաջրան քաղաքի բնակչությանը Մուհամմադ մարգարեի կողմից տրված պայմանագրերում[10]: Իսկ արդեն արաբական նվաճումների շրջանում առաջին չորս արդարադատ խալիֆաների օրոք (632-661) գլխահարկի և հողահարկի միջև էական տարբերություններ չկային: Այսպես, Սիրիայի նվաճված քաղաքների բնակչությանը արաբ զորահրամանատարների կողմից տրված պայմանագրերում գլխահարկի չափը կամ չէր նշվում, կամ նշվում էր մեկ դինարի չափով,ինչպես Բուսրայի, Տիբերիայի, Դամասկոսի բնակչությանը տրված պայմանագրերում[11]:

---

[6] История Ирана с древнейших времен до конца 18 в. Ленинград, 1958, с. 60-61:

[7] 9:29, Коран, перевод и коментарии И. Ю. Крачковского, Москва, 1986:

[8] Ал-Маверди-Меднуков Н., Палестина от завоевания ее арабами до крестовых походов по арабским источникам, Православный Палестинский сборник, вып. 50, т, 17, с. 1330:

[9] Tritton A., The Chalipsvand their non muslim subjects ,London, 1930, p. 216:

[10] Al-Balazuri, Kitab al-Futuhi al-Buldan, p.67-68, 80:

[11] Նույն տեղում, էջ 118, 124:

Դամասկոսի բնակչությանը Խալիդ իբն ալ-Վալիդ զորավարի կողմից տրված պայմանագրում բնակիչները բացի գլխահարկից պարտավորվում էին տալ նաև որոշակի քանակությամբ քացախ, ձեթ: Ալ-Բալազուրին հիշատակում է, որ սկզբնական շրջանում Ասորիքում գլխահարկը ամեն մի անձից վերցվում էր մեկ դինար և մեկ ջարիբ՝[12] և հետո Օմարը սահմանեց գլխահարկի հետևյալ չափերը՝ոսկի դրամ ունեցողներից՝ չորս դինար չափով, արծաթե դրամ ունեցողներից՝ 40 դիրհեմ չափով, ըստ հարուստի հարստության և աղքատի աղքատության[13]: Հալեպի, Անտիոքի բնակչությունը ևս պարտավորվեց վճարել մեկ դինար և մեկ ջարիբ:Վերոհիշյալ պայմանագրերով այլակրոն բնակչությունը ստանում էր անձի, գույքի, դավանանքի ազատություն, ստանձնելով նաև մի շարք պարտականություններ, ինչպես նորոգել կամուրջներն ու ճանապարհները, ճանապարհ ցույց տալ մուսուլմանին, օգնել նրան խորհուրդներով, չթաքցնել մուսուլմանների թշնամիներին իրենց տներում, չօգնել նրանց մուսուլմանների դեմ և այլն: Իսկ որոշ քաղաքների բնակչության հետ (Տիբերիա, Բաալբեք) բացի այս պայմաններից, հաշտություն կնքվեց նրանց տների կեսը մուսուլմաններին զիջելու պայմանով:

Վերին Միջագետքի նվաճված քաղաքների բնակչությանը տրված պայմանագրերով վերջիններս պետք է վճարեին մեկ դինար,որոշակի քանակությամբ մեղր, ցորեն, քացախ, որը Ասորիքի կուսակալ Մուավիան մտցրեց գլխահարկի մեջ[14]: Իսկ Ռաս ալ-Այն քաղաքի բնակչության վրա դրված հարկը Իյադ իբն Ղանմ զորավարը սահմանեց 12, 24 և 48 դիրհեմ,կախված անձի վճարողունակության աստիճանից: Այսպիսով արաբական նվաճումների սկզբնական փուլում գլխահարկի չափերը Սիրիայում և Վերին Միջագետքում ծանր չեն եղել, և դա բացատրվում է այն հանգամանքով, որ արաբները փորձում էին հաստատվել այս երկրներում, հանդուրժողականություն ցուցաբերելով բնակչության նկատմամբ:

Սասանյան Պարսկաստանի բնակչությանը տրված պայմանագրերում գլխահարկի չափը հաճախ չի նշվում, ինչպես զորավար Հուզիֆա իբն Յամանի կողմից Մահ Դինարի, Նեհավենդի, Կումիսի բնակչությանը տրված պայմանագրերում վերջիններս հարկը պետք է վճարեին ըստ իրենց կարողության, կամ մեկ դինար չափով[15]: Դեռևս անծանոթ լինելով այս

---

[12] Ջարիբը –հավասար է 2500 քառ. Մետրի(տես Хинц В., Мусульманские меры и веса с переводом в метрическую систему, Москва, 1970, с. 73):

[13] Al-Balazuri, Kitab al-Futuhi al-Buldan, p.127:

[14] Նույն տեղում, էջ 176:

[15] Al-Tabari, Tarikh al-Rusul wa al-Muluk, III, Kahira, 1962, p.2633/1:

երկրին, արաբները պայմանագրերում ցուցումներ չեն տալիս, թե հատկապես ինչ մթերքներով պետք է գանձվեր հարկը. դրանց մեջ առկա են կետեր, դրվագներ, որոնք բացակայում են նախորդ պայմանագրերում: Ըստ Տաբարիի, Դիհիսթանի և Գորգանի բնակչությունը պարտավորվեց օգնել արաբներին, որը կփոխարիներ նրանց վրա դրված գլխահարկին: Իսկ Տաբարեստանի կառավարչի հետ կնքած պայմանագրով վերջինս պետք է վճարեր տարեկան 500 հազար դիրհեմ որպես ռազմատուգանք, խոստանալով չեզոքություն պահպանել ռազմական հարցերում, որի փոխարեն արաբները չէին թափանցելու այդ երկրի սահմանները՝ առանց կառավարչի թույլտվության[16]: Վերջինս առաջարկեց արաբներին հաշտություն աննշան հարկ վճարելու պայմանով, որն ընդունվեց՝ նկատի ունենալով այդ երկրի դժվարամատչելի լինելը և բնակիչների թշնամական վերաբերմունքը իրենց նկատմամբ: Ատրպատականի բնակչությանը տրված պայմանագրով վերջիններս զորակոչի դեպքում ազատվում էին այդ տարվա հարկերից: Նույն ձևով Դարբանդի կառավարիչը խնդրեց արաբ զորավարին հարկ չդնել իր երկրի վրա, պայմանով, որ բնակիչները պատերազմի դեպքում կկռվեն արաբների թշնամիների դեմ[17]: Իսկ Մուղանի բնակչությունը պարտավորվեց որպես գլխահարկ վճարել մեկ դինար:Բացի գլխահարկ վճարելուց, Սասանյան Պարսկաստանի բնակչությունը պետք է ճանապարհ ցույց տար մուսուլմանին, օգներ նրան խորհուրդներով և այլն: Հիշյալ պայմանագրերի վերլուծությունը ցույց է տալիս, որ արաբ նվաճողները հայտնվելով իրենց համար անծանոթ երկրներում, արդեն կարիք ունեին տեղի բնակչության օգնությանը և աջակցությանը, և վերջիններիս զինվորական ծառայությունը փոխարինում էր գլխահարկին:

Անդրկովկասի նվաճված շրջանների բնակչությանը տրված պայմանագրերում, որոնց մասին հիշատակում են մուսուլման պատմագիրները, ևս շատ հաճախ չի նշվում հողահարկի կամ գլխահարկի չափը, պատմագիրները գրում են, որ Հայաստանի նախարարները շատ դեպքերում իրենց հողատիրական ժառանգական իրավունքները հաստատելու համար դիմում էին արաբ զորավարներին[18]: Տփղիսի բնակչությանը տրված պայմանագրով վերջիններս տարեկան հարյուր դիրհեմ պետք է տային ջրաղացների և խաղողի այգիների համար, նշվում է,որ գլխահարկի չափը թեթևացնելու համար չպետք է մի քանի տներ միանային:Պայմանագրից պարզ է դառնում, որ Վրաստանում այս շրջանում

[16] Al-Tabari. Tarikh al-Rusul wa al-Muluk , Kahira, 1977, IV, p. 2660/1:

[17] Նույն տեղում, էջ 2663/1-2665/1:

[18] Al-Balazuri, Kitab al-Futuhi al-Buldan, p. 196:

գոյություն է ունեցել հողատիրության նման ձև, որը թույլ էր տալիս միավորելու տները՝ քիչ հարկ տալու համար[19]: Եգիպտոսի բնակչությանը տրված պայմանագրերում գլխահարկի չափը նշվում է երկու դինար, բնակիչները պետք է տային որոշակի քանակությամբ քացախ, ձիթապտղի յուղ, մեղր, նաև՝ բրդյա վերնահագուստ, թիկնոց, տաբատ և կոշիկ: Ալ-Տաբարին հիշատակում է, որ Եգիպտոսի բնակչությունը ստացավ գույքի, անձի ապահովություն՝ հարկ վճարելու պայմանով[20]: Այսպես, Պաղեստինի, Սիրիայի, Հյուսիսային Աֆրիկայի բնակչությանը տրված պայմանագրերում չէին երաշխավորվում տեղական իշխանների հողատիրական իրավունքները, քանի որ այս երկրներում ուժեղ էր պետական հողատիրությունը: Իսկ Սասանյան Պարսկաստանի և Հայաստանի բնակչությանը տրված պայմանագրերով արդեն երաշխավորվում էին նախարարների հողատիրական ժառանգական իրավունքները, բնակչությունը կարողացավ պահպանել իր լեզուն և մշակույթը:

Այսպես, 652թ. հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու և Ասորիքի կուսակալ Մուավիայի միջև կնքված դաշնագրով Հայաստանը երեք տարով ազատվում էր Խալիֆայության նկատմամբ հարկային պարտավորության կատարումից և միայն ժամկետը լրանալուց հետո պետք է վճարեր հարկը, որի չափը թողնվում էր հայերի հայեցողությանը: Նշենք, որ այսպիսի պայման չկա արաբների կողմից նվաճված երկրների բնակչությանը տրված և ոչ մի պայմանագրում: Հայերը կարող էին ունենալ տասնհինգ հազարանոց հեծելազոր, որն ըստ պայմանագրի, պարտավոր էր ամեն տեղ մասնակցել մարտերին՝ բացի Ասորիքից: Օտար հարձակումների դեպքում արաբները պետք է այնքան զորք ուղարկեին Հայաստան, որքան կպահանջեին հայերը: Նրանք չպետք է միջամտեին Հայաստանի ներքին գործերին և որպես դրա երաշխիք ոչ միայն զորք չպետք է մտցնեին Հայաստան, այլև երկրի բերդերում չպետք է լիներ և ոչ մի արաբ զինվոր[21]: Տարեկան չնչին հարկի դիմաց Հայաստանը ստանում էր լայն ինքնավարություն, գոնե առժամանակ պահպանվում և ապահովվում էր երկրի անվտանգությունը: Հայ նախարարները թեև համարվելու էին Խալիֆայության հպատակներ, սակայն պահպանելու էին իրենց ներքին ինքնուրույնությունն ու սեփական հողատիրական ժառանգական

[19] Նույն տեղում, էջ 201-202:

[20] Al Tabari, Tarikh al-Rusul wa al-Muluk, IV, p. 2581/1-2582/1:

[21] Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1979, էջ 164:

իրավունքները: Պայմանագրում արտահայտված էր նաև Խալիֆայության հայերի նկատմամբ մեղմ և զիջողական վերաբերմունքը. արաբաբյուզանդական մրցակցության պայմաններում Հայաստանն իր դիրքով երկու կողմերի համար կարևորություն էր ներկայացնում: Հայկական հեծելազորի ռոճիկը տրվում էր Խալիֆայի կողմից, ինչպես-որ այն տրվում էր մուսուլմանական բանակներին, և կարելի է փաստել, որ արաբների կողմից նվաճված երկրներից և ոչ մեկը չի ունեցել այն լայն ինքնավարությունն ու իրավունքները, որ տրված է եղել նախաարաբական Հայաստանին[22]:

Իր հերթին 12-րդ դարի պատմագիր Ս.Անեցին հիշատակում է հավանաբար 7-րդ դարի վերջին կամ 8-րդ դարի սկզբին հայերին տրված մի պայմանագրի մասին, որն ակներևաբար գրվել է Մուհամմադ իբն Մրվան զորավարի կողմից: Պայմանագրում հարկի չափը սահմանված է չորս դրամի չափով: Բնակչությունը պատրաստվում էր արաբներին տալ նաև 3 մոդ աղացած ցորեն, ձիատոպրակ, մազե պարան: Հոգևորականները, ազատներն ու զինվորականները ազատվում էին հարկերից[23]: Հ.Մանանդյանը նշում է, որ դրամը 7-րդ դարում Մերձավոր Արևելքում օգտագործվող արծաթե դրամն էր, իսկ 3 մոդ ցորենն էլ հավասար էրերկու փութի: Հայ պատմաբանի հետագա դիտարկումից պարզ է դառնում, որ հոգևորական դասը, զինվորականներն ու ազատները Օմայաններից ստանում էին հատուկ ռոճիկ՝ տարեկան հարյուր հազար դահեկան չափով[24]: 8-րդ դարի պատմագիր Ղևոնդը հիշատակում է այս մասին[25]: Պայմանագրում հիշատակված ձիատոպրակը (կրկնապարկ), մազե պարանը և ձեռնոցը հավանաբար արաբները իրենց զորքի կարիքների համար էին վերցնում և որպես վաչկատուն, անասնապահ ժողովուրդ, գերադասում էին արշավանքների ժամանակ իրենց հետ ունենալ առաջին անհրաժեշտության ապրանքներ՝ չափավոր քանակով: Օմայանների տիրապետության սկզբնական շրջանում, քանի դեռ արաբները վերջնականապես չէին հաստատվել Հայաստանում, նրանք հարկերով չէին ծանրաբեռնում բնակչությանը:

---

[22]Մանանդյան Հ., «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում», հրատարակություն Մելքոնյան ֆոնդի, ՅԵրևան, 1934, էջ 253:

[23] Սամուէլ Անեցի, «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 82:

[24] Մանանդյան Հ., Երկեր, հ. Բ, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1960, էջ 212:

[25] Պատմութիւն Ղևոնդա Մեծի վարդապետի հայոց, ի տպարանի Ի. Սկորոխոդովի, Սանկտ Պետերբուրգ, 1887, էջ 113:

Փաստենք, որ արաբական նվաճումների շրջանում արաբները չունեին կայուն հարկատեսակներ և դրանց որոշակի չափերը, այդ պատճառով էլ մուսուլման պատմագիրները շատ հաճախ հիշատակում են գլխահարկն ու հողահարկը, որոնք ունեն Արաբական Խալիֆայության հաստատման սկզբնական շրջանում լայն տարածում ստացած ծխահարկի իմաստն ու նշանակությունը[26]: Սկզբնական շրջանում գլխահարկն ու հողահարկը օգտագործվել են միևնույն նշանակությամբ՝ հարկի իմաստով: Նաև նշենք, որ արաբ զորավարները շատ հաճախ փոխադարձ համաձայնության գալով նվաճված շրջանների առաջնորդների հետ, նրանց վրա նշանակում էին որոշակի հարկ, որն ավելի շուտ հիշեցնում էր ռազմատուգանք: Հայ պատմագիրները, ի տարբերություն մուսուլման պատմագիրների, որոշակի դեպքերում հիշատակում են հարկերի տեսակները, չափերը: Ս.Անեցին գրում է, որ հարկերը գանձվում էին ըստ ծխերի կամ ընտանիքների[27]: Արաբական նվաճումների շրջանում արաբները հենց այդպես էլ գանձում էին հարկերը: Միայն հետագայում, երբ Արաբական Խալիֆայությունը վերջնականապես հաստատեց իր իշխանությունը նվաճված երկրներում, գլխահարկն ու հողահարկը՝ որպես առանձին հարկեր, առանձնացվեցին իրարից և մուսուլմանական իրավագիտության մեջ ստացան իրենց ձևակերպումները: Հայաստանում 725թ. Եզիդ խալիֆայի հրամանով Հերթ ոստիկանը աշխարհագիր կատարեց, հաշվառման ենթարկվեցին երկրի բնակչությունը, հողերը, անասունները, սահմանվեցին հարկերի կայուն չափերը: Այդ հաշվառումից հետո հայ նախարարները ևս պարտավորվեցին հարկեր վճարել Խալիֆայությանը[28]: Իսկ արդեն Աբբասյան խալիֆա Մանսուրի օրոք (754-775), ինչպես հիշատակում է Ս.Անեցին, արաբները այնքան էին ճնշում իրենց հպատակներին, որ նրանք ոչինչ չկարողանալով տալ հարկահավաքներին, իրենց ննջեցյալների գերեզմաններն էին փորում որևէ թանկարժեք իր գտնելու հույսով[29]: Էլ ավելի ծանրացնելով հարկային լուծը հպատակների վրա, արաբները պարտադրում էին նրանց վճարել իրենց մահացած ազգականների պարտքերը: Ղևոնդը գրում է, որ Հայաստանի կառավարիչ Աբդուլան քահանաներին և հոգևորականներին պարտադրել

[26] Մելիք-Բախշյան Ս., Հայաստանը VII-IX դարերում, «Միտք» հրատարակչություն, Երևան, 1960, էջ 144-145:

[27] Սամուէլ Անեցի, «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», էջ 82:

[28] Մովսես Կաղանկատուացւոյ «Պատմութիւն Աղուանից աշխարհի», Մոսկվա, 1860, էջ 258.

[29] Սամուէլ Անեցի, «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», էջ 88.

էր կազմել մահացած մարդկանց ու նրանց ընտանիքների կենդանի մնացած անդամների ցուցակները և հարկադրել վերջիններիս, որ վճարեն իրենց մահացած ազգականների պարտքերը[30]: Հայկական միջնադարյան աղբյուրները նշում են, որ արաբները հարկերը վճարած մարդկանցից այն չվճարածներից առանձնացնելու համար առաջինների պարանոցներին անց էին կացնում կապարե կնիքներ[31]: 8-րդ դարից սկսած արաբները սկսում են բռնագրավել նաև հայոց եկեղեցու և հոգևորականների հողերն ու ունեցվածքը: Ըստ Ղևոնդի, Հայաստան ուղարկված հարկահավաք իբն Դոկեն Դվինի կաթողիկոսարանի հոգևորականների ունեցվածքը խլում է, հայոց ստեփանոս 2-րդ Դվնեցի կաթողիկոսին (788-790) մեծ զոհողությունների գնով հաջողվեց որոշ ժամանակ ապահովել եկեղեցու ու հոգևորականության բարվոք վիճակը[32]:

Այսպիսով, եթե Արաբական տիրապետության հաստատման սկզբնական շրջանում վճարվող հարկերը՝ գլխահարկն ու հողահարկը, դեռևս առանձնացված չէին իրարից, ապա արդեն հետագայում, Աբբասյանների օրոք, հարկերը մեծ չափերի հասան և պատճառ հանդիսացան հպատակ ժողովուրդների ընդվզումների և ապստամբությունների համար:

Գ. Մկրտումյան

Գլխահարկը և հողահարկը արաբների կողմից նվաճված երկրների և Հայաստանի բնակչությանը տրված պայմանագրերում

Ամփոփում

Հոդվածում ուսումնասիրության նյութ են դարձել արաբական հարկային քաղաքականության հիմնական հարկատեսակները՝ գլխահարկն ու հողահարկը, որոնք հետագայում իրենց ձևակերպումը ստացան մուսուլմանական իրավագիտության մեջ: Դրանց չափերը, որոնք սկզբնական շրջանում եղել են չափավոր, արտահայտվել են նվաճված երկրների և Հայաստանի բնակչությանը տրված պայմանագրերում: Իսկ արաբական տիրապետության հաստատումից հետո հարկերի չափերը ավելացել են, հասել աննկարագրելի աստիճանի, որոնց մասին հիշատակում են մասնավորապես հայկական միջնադարյան աղբյուրները:

[30] Ղևոնդ, Պատմություն, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1982, էջ 105.

[31] Նույն տեղում:

[32] Նույն տեղում:

Г. Мкртумян

Подушные и земельные налоги в договорах, данных народам Армении и других стран, завоеванных арабами

Резюме

В статье изучаются основные типы налогов, предусмотренные арабской налоговой политикой – подушные и земельные налоги, которые в дальнейшем нашли свою формулировку в мусульманском праве. Их размеры, которые были умеренными в начальной стадии, нашли отражение в договорах, данных народам Армении и других завоеванных стран. А после установления арабского господства налоги увеличились, дошли до неописуемых размеров, о чем свидетельствуют армянские средневековые источники.

G. Mkrtumyan

The poll and land taxes in the contracts given to the populations of Armenia and other defeated countries

Summary

The article examines the main types of taxes provided by Arab tax policy; the poll and land taxes, that later found their formulation in Islamic law. Their dimensions that were modest in the initial stage are reflected in the contracts given to the people of Armenia and other conquered countries. After the establishment of the Arab domination the taxes increased and reached the indescribable dimensions, as evidenced by the medieval Armenian sources